

2-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԿԱՐԼԵՆԻ

ՄԻՐԻԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1967-1996ԹԹ.

Է.00.02. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՍԱՄԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

Վր. Ս. Զախարյան
Զախարյան *Զախարյան*
Վր. Ս. Զախարյան

ԵՐԵՎԱՆ - 1999

Վր. Ս. Զախարյան
20.08.99

Ատենախոսության քեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր Ա. Պ. ՓՈԼԱՂՅԱՆ
պատմական գիտությունների
բեկնաժու
Շ. Լ. ԿԱՐԱՄՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական ինստիտուտի Ընդհանուր պատմության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է

“20” սեպտեմբերի 1999թ. ժամը 14⁰⁰ -ին

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 006 մասնագիտական խորհրդում
(հասցեն՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է “20” օգոստոսի 1999թ.

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար. պ. գ. դ.

Ա. Ա. ԽՈՍՅԱՆ

Աշխատության ընդհանուր բնութագիրը

Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման գլխավոր
խոչընդոտներից է արաբա-խորաշխարհյան հակամարտությունը, որի արմատները
զավիս են դարձրել խորրից: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և
1948թ. Իսրայելի պետության ստեղծումից հետո այդ տարածաշրջանը վերածվեց
միջազգային քաղաքականության բարդ հանգույցի և դարձավ երկրագնդի բեժ
կետերից մեկը:

Երկար տարիներ Իսրայելին հակամարտ ու հակազդող արաբական
պետություններից ամենակարևորն էր համարվում Եգիպտոսը՝ իր ռազմական
ներուժով, տարածքով, գործուն ղեկավարությամբ և շահավետ աշխարհագրական
դիրքով: Սակայն 1979թ., ստորագրելով Իսրայելի հետ Գեմփ-Գեիդի
համաձայնագիրը, Եգիպտոսը կորցրեց իր այդ դերը, իսկ նրա տեղը գրավեց
Իսրայելի մյուս հզոր հարևանը՝ Սիրիան, որն իր վրա վերցրեց արաբա-խորաշխարհյան
հակամարտության արաբական ճամբարի ղեկավարությունը, ստանձնելով
պատերազմիկու և խաղաղություն հաստատելու որոշման մենաշնորհը: Ռազմական
տեսանկյունից արաբա-խորաշխարհյան հակամարտությունը վերածվեց սիրիա-
խորաշխարհյան հակամարտության: Եվ երբ պսոզնատիցյան հիմնախնդիրը
կենտրոնական տեղ է գրադեցնում արաբա-խորաշխարհյան հակամարտության մեջ,
սույս սիրիա-խորաշխարհյան հարաբերությունները առանցքային նշանակություն ունեն
այդ հակամարտության համար ռազմավարական և աշխարհարարական
տեսակետից:

Սուր պատերազմի տարիներին գերտերությունների միջև շարունակվող
հակամարտությունը, ինչպես նաև տարածաշրջանի բևեռացումը մի կողմից ԱՄՆ-ի
և Իսրայելի, իսկ մյուս կողմից ԽՍՀՄ և Սիրիայի դաշինքների միջև, անհնարին էին
դարձնում մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորումը: Այդ առումով ԱՄՆ-ի
գերտերություններից մեկի և Սիրիայի՝ Իսրայելին դիմակայող առաջնային
արաբական երկրի միջև հարաբերությունների ուսումնասիրությունը հատուկ
նշանակություն է ձևեր բերում: Սիրիա-ամերիկյան հարաբերությունների
քննությունը հնարավորություն է բնծեռում հասկանալու արաբա-խորաշխարհյան
հակամարտության ճրթություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև
հակամարտության կարգավորման և տարածաշրջանում խաղաղության
հաստատման հեռանկարները: Արանով էլ բացատրվում է սույն բեժայի
ընտրությունն ու նշանակությունը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՄՆԵՐԸ: Հեղինակն իր առջև խնդիր է
դրել սիրիա-ամերիկյան հարաբերությունների վերաբերյալ գոյություն ունեցող
նյութերի և այլ սկզբնաղբյուրների վերլուծության հիման վրա լուսարանել այդ
առնչությունները 1967-1996թթ. միջև ընկած ժամանակահատվածում, բացահայտել
նրանց ձևավորման մեխանիզմներն, ընթացքն ու հեռանկարները:
Ռուսումնասիրության խնդիրների մեջ են մտնում նաև տարածաշրջանում
կատարված կարևորագույն դեպքերի ու զարգացումների նկատմամբ Սիացյալ
Նահանգների և Սիրիայի մտտեցումների բազմակողմանի մեկնաբանությունն ու
վերլուծությունը:

Երկու երկրների միջև հարաբերությունները կենտրոնացված են արաբա-
խորաշխարհյան հակամարտության շուրջ, ուստի և աշխատության մեջ այդ հարցերի
քննարկումը նույնպես զգալի տեղ է գրադեցնում:

Եվ, վերջապես, հեղինակը փորձում է վերլուծել Սիրիայի դերի կարևորությունը տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում, միաժամանակ պարզաբանելով սիրիա-ամերիկյան հարաբերությունների զարգացման չօգտագործված հնարավորություններն ու ազդեցությունը՝ արաբա-խորայեյան հակամարտության կարգավորման գործընթացի նկատմամբ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՌԻՅԹԸ. Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ և հրատարակված աշխատություններ: Մակայն Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ հատուկ ուսումնասիրություն դեռևս կատարված չէ: Սա սիրիա-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրման առաջին փորձն է արաբագիտության մեջ: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1967թ. սկսած արաբա-խորայեյան «վեցօրյա» պատերազմից մինչև 1996թ. Իսրայելում Բենյամին Նեբանյահուի իշխանության գալն ու դրա հետևանքով խաղաղության գործընթացի ստեղծումը:

Աշխատության մեջ առաջին անգամ լուսաբանվում է սիրիա-ամերիկյան հարաբերությունների ձևավորման ընթացքն ու զարգացման տարբեր փուլերը, նդրովի է մեկնաբանվում ԱՄՆ-ի քաղաքականության ազդեցությունը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման ու խաղաղության հաստատման համար, վերլուծության է ենթարկվում Սիրիայի հանդեպ ամերիկյան քաղաքականության բացթողումներն ու ասիմետրիկությունները:

Աշխատության կարևոր նյութային մեկն այն է, որ առաջին անգամ վործ է արվում վերլուծել Դամասկոսի և Վաշինգտոնի փոքրած արտաքին քաղաքականության իրական շարժառիթները՝ ներքին քաղաքական գործընթացների և տարածաշրջանային զարգացումների հետ սերտ փոխկապակցվածության մեջ:

Ուսումնասիրությունը նշանավորվում է նաև նրանով, որ աշխատության մեջ օգտագործվել են հեղինակի կողմից երկու երկրների պաշտոնյաների և ղյվանագետների հետ բազմաթիվ հանդիպումների արդյունքում ստացված նյութեր ու տեղեկություններ:

Աշխատությունը գրվել է տարբեր ուղղությունների հիման վրա: Հեղինակը լայնորեն օգտվել է ամերիկյան և արաբական սկզբնաղբյուրներից: Հայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են ամերիկյան, արաբական և խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության և արտաքին քաղաքական հարցերի վերաբերյալ տպագրված բազմաթիվ մենագրությունները, ժողովածուներն ու պարբերականները:

Ամերիկյան գրականության շարքում պետք է հիշատակել Վ.Քլանդլի, Պ.Սիլի, Ա.Կորդսանի, Ջ.Կիմչեի, Վ.Պոլկի, Վ.Լաքոսի, Ռ.Հիններուշի, Ռ.Ֆրիդմանի, Մ. Մաուզի, Բ.Կաուֆմանի, Մ.Հալտոնի և այլ հետազոտողների աշխատությունները: Պետք է հիշատակել նաև աշխատության համար չափազանց օգտակար եղած ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների՝ Հ.Քիսինջերի, Ռ.Նիքսոնի, Ս.Ալենսի, Ջ. Զարտերի, Հ.Դեքմեյանի և Ռ.Ռեյգանի աշխատություններն ու հուշագրությունները:

Բարձրացված հարցերի և առանձին խնդիրների վերլուծության համար կարևոր նշանակություն ունեցան խորհրդային արևելագետներ՝ Ե.Պյոլիսի,

Լ.Մեդվեդևի, Ե.Պրիմակովի, Ն.Հովհաննիսյանի, Օ.Ֆոմինի, Վ.Վավրովի, Է.Փիր-Բուդաղովայի, Վ.Բուդյանսկու արժեքավոր հետազոտությունները:

Արաբ հետազոտողներից անհրաժեշտ է առանձնացնել Մ.Հեյբալի, Ֆ.Ալչանի, Գ.Սալամի, Ռ.Ավվադի, Շ. ալ-Այսամի, Խ.Հանի, Մ. ալ-Ռազզազի, Հ.Ադիլի ուսումնասիրությունները: Կարևոր տեղ են զբաղեցնում Հ.Ասադի երույթների ժողովածուները, սիրիական ղեկավարների հարցազրույցներն ու Բասա կուսակցության նյութերը:

Աշխատության վերջում ներկայացված են երեք Հավելված, որոնցից առաջինում իսրայելյան բնակավայրերը գրաված Գոլանի բարձունքներում քարտեզը, երկրորդում՝ 1987-94թթ. ընթացքում Իսրայելին ԱՄՆ-ի բազմական օժանդակության ու զենքի առաքումների սղոյուսակը, իսկ երրորդում՝ 1993-94թթ. դրությամբ Սիրիայի և Իսրայելի ցամաքային սպառազինությունների և օդային ուժերի համեմատական դիագրամը:

ՄԵԹՈԴՎԱԿԱՆ ՀՆԱՆՔ. Աշխատության մերողական հիմքը պատմա-համեմատական և վերլուծական սկզբունքն է: Սիրիա-ամերիկյան հարաբերությունների ամբողջ համակարգը վերլուծության է ենթարկվում Մերձավոր Արևելքում և ամբողջ աշխարհում տեղի ունեցող դեպքերի ու երևույթների հետ սերտ միասնության մեջ: Քննվող նյութի նկատմամբ պատմա-դիվանագիտական մոտեցումը հնարավորություն է բնձնում երկկողմ հարաբերությունների համակարգման և անկողմնակա քննության համար:

ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Սիրիա-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրությունը կարևորվում է ինչպես Մերձավոր Արևելքի նորագույն պատմության լուսաբանման, այնպես էլ արաբա-խորայեյան հակամարտության զարգացման առավել խոր ընկալման առումներով: Սիրիա-ամերիկյան հարաբերությունների քննությունը բույլ կտա ճիշտ ըմբռնելու տարածաշրջանում կատարվող իրադարձությունները, հասկանալու մերձավորարևելյան հակամարտության մեջ Սիրիայի և Միացյալ Նահանգների դերն ու նշանակությունը, հստակ պատկերացում կազմելու հակամարտության կարգավորման հեռանկարների մասին: Թե՛ման հետաքրքրություն է ներկայացնում նաև տարածաշրջանում արդի փուլում կատարվող զարգացումներն ու արաբա-խորայեյան հակամարտության նկատմամբ արաբական երկրների ունեցած տարբեր մոտեցումները պարզաբանելու աեսանկյունից:

Եվ վերջապես բե՛ման կարևոր է Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Սիրիայի նկատմամբ ՀՀ արտաքին քաղաքականության մշակման տեսանկյունից:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ. Աշխատության հիմնական դրույթները և հարցերը կրապարակվել են առանձին մենագրության և հոդվածների ձևով: Ուսումնասիրվող բե՛մայի շուրջ հեղինակը գիտական զեկուրումներով հանդես է եկել Սոֆիայի համալսարանի և Հունաստանի արտաքին քաղաքականության հիմնադրամի (ELIAMEP) կողմից կազմակերպված տարբեր գիտական համաժողովներում, դասախոսությամբ հանդես է եկել Հունաստանի Միչերկրական հիմնադրամում: Աշխատության մեջ շոշափվող, հատկապես արդի շրջանին վերաբերող, առանձին հարցերը քննարկվել են ՀՀ ԱԳՆ -ում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՑ ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին գլխում «Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1974թթ.), հեղինակը համառոտ կերպով և ընդհանուր գծերով տալիս է սիրիա-ամերիկյան հարաբերությունների ձևավորման պատկերը:

2-րդ Համաշխարհային պատերազմից ԱՄՆ-ի քաղաքականությունը Արևմտյան Արևելքում մեծապես պայմանավորված է եղել երեք գործոններով՝ տարածաշրջանում կենտրոնացված նավթի անսպառ պաշարների սովաշուրթամբ, Իսրայելի պետության գոյությանը և ԽՍՀՄ-ի հետ պայքարի դիմակայության համզամանքով: Տարածաշրջանում երկու գերտերությունների հակամարտությունը հիմնականում կենտրոնացել էր արաբա-իսրայելյան հակամարտության շուրջը, իր հերթին ձևավորելով երկու հակադիր ուժեր՝ մի կողմից ԽՍՀՄ-ի և «մայրասեղ ազգայնական» վարչակարգեր ունեցող արաբական երկրների՝ Սիրիայի, Իրաքի (1958թ. հետո) և Եգիպտոսի (Նասերի օրոք), իսկ մյուս կողմից ԱՄՆ-ի և Իսրայելի ու «չափավորական» պրոամերիկյան արաբական քաղաքականությունների՝ Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Բուվեյթի և այլն:

Սիրիան, որպես արաբական աշխարհի անբաժան մաս և կարևոր ռազմավարական դիրք ունեցող երկիր, հանդիսանում էր ոչ միայն Մոսկվայի դաշնակիցն, այլև Իսրայելին հակադրող և հակամարտող առաջնային ուժերից մեկը: Այդ իսկ պատճառով սիրիա-ամերիկյան հարաբերությունների քննությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

ԱՄՆ-ի և Սիրիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1944թ. սեպտեմբերի 19-ին, որից հետո Դամասկոսում սկսեց գործել ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությունը, 1950թ. վերածվելով լիաբժեր գործող դեսպանության: Հաշվի առնելով Սիրիայի աշխարհաքաղաքական կարևորությունը, բնական էր, որ Վաշինգտոնը փորձում էր միջամտել նաև այնտեղ կատարվող իրադարձություններին: Չնայած որ ԱՄՆ-ն, ընդհանուր առմամբ, պասիվ քաղաքականություն էր որդեգրել Սիրիայի նկատմամբ, ուշադրությունը կենտրոնացնելով եգիպտա-իսրայելյան ճակատում, այնուամենայնիվ մինչև 1963թ. մարտը՝ Սիրիայում Արաբական Վերածնունդի Սոցիալիստական Բաաս կուսակցության իշխանության գալը, Վաշինգտոնի քաղաքականությունն առաջին հերթին նպատակ էր հետապնդում ոչ միայն խանգարել ԽՍՀՄ-ի հետ Դամասկոսի մերձեցմանը, այլ նաև ներգրավել վերջինիս «ռազմական հակամարտության խմբավորումների մեջ, որոնք 50-ական թվականներին առատորեն կրակարարակ էին նետվում տարբեր առումներով»: Այսպես, օգտվելով Սիրիայում ստեղծված անկայուն ու խռոված, երբեմն նաև քառասյին ներքաղաքական իրավիճակից, 1957թ. ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերի վարչակազմն անգամ իշխանության բռնի փոփոխման փորձ կատարեց այդ երկրում:

ԱՄՆ-ի ղեկավար շրջանակները, նշելով Արևմտյան Արևելքի տնտեսական և ռազմավարական նշանակությունն իրենց երկրի համար, վճռականորեն հայտարարում էին, որ չեն բույստարի, որպեսզի «միջազգային համայնավարությունը» լրացնի տարածաշրջանում գոյություն ունեցող վակուումը:

Երբ ընդ, որ ԱՄՆ-ի և Իսրայելի միջև ռազմավարական հարաբերությունների զարգացումն ու սերտացումը մեծապես պայմանավորված էր հենց Արևմտյան Արևելքում Խորհրդային Միության ներքավանցմամբ ու արաբական աշխարհում նրա դիրքերի աստիճանաբար ամրապնդմամբ:

1967թ. «վեցորյա» արաբա-իսրայելյան պատերազմի սրբյունքում Սիրիան ոչ միայն մարդկային, նյութական և տարածքային կորուստներ կրեց, այլև խզեց դիվանագիտական հարաբերությունները Վաշինգտոնի հետ, որոնք վերականգնվեցին միայն 1974թ., բայց հիմնականում չփոխեցին իրենց հակամարտ կուրյունը: Այդ պատերազմն էլ ավելի ուժեղացրեց Սիրիայի անմիջական կախվածությունը Մոսկվայից և Իսրայելիցը ԱՄՆ-ից:

1967թ. պատերազմի բերացքում իրականացված հաջող ռազմական գործողությունների շնորհիվ Իսրայելը վերածվեց տարածաշրջանային ուժի, որն այսուհետ կարևոր դեր սկսեց խաղալ տարածաշրջանում ամերիկյան շահերի հետապնդման գործում: 1967-73թթ. բերացքում ԱՄՆ և Իսրայելի հարաբերությունները, չնայած մնալով Հովանավոր-Հովանավորայի (Patron-Client) մակարդակին, փաստորեն վերաճեցին ստոր փոխադարձ ռազմավարական նշանակություն ունեցող դաշինքի, որը հիմնված էր այն տեսակետի վրա, որ Իսրայելը կարող է գաղել Խորհրդային ազդեցության տարածումը, պաշտպանել «չափավոր» արաբական վարչակարգերը «մայրասեղականներից» և սպառնով տարածաշրջանային կայունությունը ռազմական գերազանցության հասնելու միջոցով:

Տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանումը Վաշինգտոնը դիտում էր որպես կայունության, երև ոչ խաղաղության բանալի: Չնքի առարումները Իսրայելին, ինչպես նաև Հորդանանին առաջնային խնդիր էին ներկայացնում ամերիկյան վարչակազմի համար, ավելի առաջնային բան խաղաղ նախաձեռնություններով հանդես գալը: Հետագա երեք տարիների բերացքում անուշադրության մատնելով Եգիպտոսում և Սիրիայում, ինչպես նաև պաղեստինցիների շրջանակներում կատարվող քաղաքական իրադարձությունները, Նիքսոնն ու Էիսինգերը պատշաճ ուշադրություն չդարձրեցին նաև արաբական նավթի աճող դերի վրա, որպես տարածաշրջանային հավասարակշռության պահպանման մեկ այլ ոչ պակաս կարևոր գործոնի, որը միջարաբական հարաբերություններում սուղի ունեցած փոփոխությունների հետևանքով վերածվեց քաղաքական յուրջ գեների և հիմք որեց Եգիպտա-սաուդյան աստիճանաբար մերձեցմանը, որոշ չափով ճանապարհ հարթելով հաջորդ արաբա-իսրայելյան պատերազմի սանձազերծման համար:

Պետր է նշել, որ 1969-1970թթ. բերացքում Իսրայելի վրա ամերիկյան ճնշման հիմնական նպատակն էր Եգիպտա-իսրայելյան և Խորդանանա-իսրայելյան քաղաքական համաձայնագրերի ստորագրումը: Իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա նա դուրս էր մնացել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության օրակարգից: ԱՄՆ-ի «խաղաղարար» նախաձեռնությունները, մասնավորապես «Ուղերի ծրագիրը», մերժվում էին սիրիական ղեկավարության կողմից, որոնք որակվում էին որպես «արաբական ազգին պարավորականություն» պարտադրելու փորձեր: Շարունակելով իր անհանդուրժողական կեցվածքը Իսրայելի նկատմամբ, Դամասկոսը կտրականապես ժխտում էր բանակցությունների որևէ հնարավորություն Իսրայելի կամ էլ նրա «քողարկված պաշտպան ԱՄՆ-ի հետ»: Ընդհանուր առմամբ 1967-1970թթ. ընկած ժամանակահատվածում սիրիա-ամերիկյան ուղղակի շփումները գրեթե բացակայում էին:

Սիրիան և Միացյալ Նախանգները, գտնվելով հակառակ բեռներին տարբեր մասերում չին կարողանում միմյանց հետ մերձեցման եզրեր գտնել: Մոսկվայի և Դամասկոսի միջև հաստատված ռազմական համագործակցությանը Միացյալ

Նստահանվելու հավաքեցին Իսրայելին էլ ավելի գործնական ուղղվածության օժանդակությամբ:

1973թ. հոկտեմբերի 6-ին բռնկված չորրորդ արաբա-իսրայելյան պատերազմը եկավ հասնատելու 1967թ. ի վեր ամերիկյան քաղաքականության որդեգրած «ուղղակի հավասարակշռության» պահպանման սկզբունքի բացառման անկատարելությունն ու անիրատեսությունը:

Երկրորդ գլխում «Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1973թ. պատերազմից հետո մինչև Քենֆ-Գևիդ», հիմնականում քննարկվում են երկրորդ հարաբերություններում տեղի ունեցած դրական փոփոխությունները՝ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը, Դամասկոսում «ամերիկյան շահերը պաշտպանող» ներկայացուցչության բացումը և Նիքսոնի այցելությունը Սիրիա, ինչպես նաև 1974թ. սիրիա-իսրայելյան տարանջատման մասին համաձայնագրի ստորագրման գործում ԱՄՆ-ի ներդրումն ու Քենֆ-Գևիդից առաջ Վաշինգտոնի ծավալած գործունեությունը: Նույն գլխում մեծ տեղ է հատկացված նաև լիբանանյան ճգնաժամին:

Հոկտեմբերյան պատերազմից հետո Սիրիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության հիմնական փոփոխությունը եղավ այն, որ Վաշինգտոնը աստիճանաբար սկսեց ընդունել և գիտակցել Սիրիայի դերի կարևորությունը հակամարտության մեջ, ինչպես նաև տարածաշրջանում Աստղի անձնական ազդեցության հանգամանքը:

Հարցի ուսումնասիրությունը հայցողին հանգեցրել է այն եզրակացության, որ բևե ամերիկացիները սկսեցին գիտակցել Սիրիայի հետ հարաբերությունների զարգացման կարևորությունը, սակայն միայն այնքանով, որքանով դա չէր հակասում «Իսրայելի անվտանգությանն ու օրինական շահերին»: Կարճ ասաց, Միացյալ Նստահանվելու շահագրգռված էին միմյանց Իսրայելի համար խաղաղ սահմաններ (այդ բովանակումն Սիրիայի հետ) ապահովելու հարցում: Այդ իսկ պատճառով հնարավոր համարելով որոշակի «կոնսոլիդացիա» տարածքային փոփոխություններ Գոլաններում, Վաշինգտոնը որևէ կերպ կասկածի տակ չէր դնում Գոլաններում Իսրայելի ներկայության պահպանման անհրաժեշտությունը:

Հեղինակն անդադառնում է Քիսինջերի քաղաքականության հետևյալ բացթողումներին: Առաջին բացթողումը կայանում էր նրանում, որ դիտարկելով Մերձավոր Արևելքը Խորհրդային Միության հետ գլոբալ դիմակայության տեսանկյունից, ԱՄՆ պետքարտուղարն անկարող գտնվեց վերջինիս հետ արդյունավետ շփման եզրեր հաստատել: Ծայրահեղական կեցվածք որդեգրելով ԽՍՀՄ-ի նկատմամբ, Քիսինջերը կամ թերագնահատեց, կամ էլ վերագնահատեց Մոսկվայի դերը տարածաշրջանում:

Երկրորդը, անձնապես թերահավատ լինելով արաբների և հրեաների միջև իրական խաղաղության հաստատման հարցում, Քիսինջերը փորձում էր ոչ թե համընկանուր կարգավորման, այլ կայուն հավասարակշռության (status quo) ապահովմանը տարածաշրջանում պահպանելով Իսրայելի հետ հատուկ հարաբերություններն ու ստիպելով արաբներին դիմել ԱՄՆ-ի, այլ ոչ թե Խորհրդային Միության հովանավորությանը Իսրայելի հետ խաղաղություն հաստատման համար: Ամերիկյան պատմության մեջ առաջին հրեա պետքարտուղարը չկարողացավ հասկանալ այն պարզ հանգամանքը, որ Իսրայելի զինուժը դեռ բավական չէ հավասարակշռությունն ապահովելու համար:

Քիսինջերի միակողմանի քաղաքականությունը, ինչպես հայտնի է, ոչ միայն չապահովեց տարածաշրջանային status quo-ն, այլև որոշակի խաղաղության հանդիսացավ տարածաշրջանում ամերիկյան շահերի հետապնդման գործում (1973թ. պատերազմը և նախաին Լճաբազն): Չբացեցելով իր բացահայտ համակրանքը Իսրայելի պետության և նրա դեկադարների նկատմամբ, Քիսինջերը այդպես էլ չկարողացավ ձեռք բերել արաբական աշխարհի մեծամասնության վստահությունը, այդ իսկ պատճառով գրկվելով այնտեղ կատարվող դեպրեսիի ու քարգացումների վրա ազդելու գործնական հնարավորությունից:

Քիսինջերի Երրորդ հիմնական բացթողումը եղավ այն, որ նա միակողմանիորեն չբացեց իր շահերը Եգիպտոսը թերագնահատեց Սիրիայի, ինչպես նաև Պաղեստինցիների դերը տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում: Եվ ինչպես կոնսոլիդացիա հետագայում, հատկապես Լիբանանի հետ կապված հարցում, Քիսինջերի այդ կարճատեսությունն էլ ավելի կոժժվարացնի ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության իրագործումը:

Լիբանանյան ճգնաժամի մասին խոսելիս, հեղինակը ամերիկյան «քարյացակամ» կեցվածքը սիրիական ներխուժման նկատմամբ բացատրում է այն հանգամանքով, որ 1976թ. ինչպես Քիսինջերի, այնպես էլ Ֆորդի համար որոշիչ տարի էր: Այդ տարվա ընթացքում նրանք պետք է ոչ միայն կանխել Մերձավոր Արևելքում նոր ճգնաժամի առաջացումը, իր բացասական բոլոր հետևանքներով, այլև լուրջ դիվանագիտական հաշտության հասնելին: Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի Սիրիան համաձայնեցնի մայիսի 30-ին Գոլաններում «կարմիր բերետների» մանդատը երկարաձգմանը: Հակառակ դեպքում կտուպալվելին Քիսինջերի բոլոր դիվանագիտական հաշտությունները և կստիպվեին Ֆորդին իր նախագահական նախընտրական պայքարը իրականացնել Մերձավոր Արևելքում ընթացող նոր ճգնաժամի սուվերիտետը:

Եվ, վերջապես, լիբանանյան ճգնաժամի կապակցությամբ հեղինակը եզրակացնում է, որ իրականում Վաշինգտոնը չունենալով համապարփակ մշակված քաղաքականություն ճգնաժամի կարգավորման կամ էլ պաղեստինցիների հիմնահարցի լուծման վերաբերյալ, շփոթված և խառնված էր Լիբանանում ընթացող պատերազմով: Իսկ Քիսինջերը այն դիտարկում էր պարզապես որպես արաբա-իսրայելյան հակամարտության շարունակություն:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա, հեղինակի կարծիքով, Լիբանանում նա ոչ ամերիկյան, ոչ առավել էս Իսրայելյան «խաղ էր խաղում», թեկուզ այն պարզ պատճառով, որ ոչ Քիսինջերը և ոչ էլ Ֆորդը որևէ լուրջ խաղ չունեին իրենց մտքերում, բացի նրանից, որ չբույստրել լայնածավալ արաբա-իսրայելյան պատերազմի սանձազերծումը:

Քենֆ-Գևիդում համաձայնագրի ստորագրումը Եգիպտոսի և Իսրայելի միջև ԱՄՆ-ում համարվեց Բարտերի վարչակազմի ամենամեծ արտաքին քաղաքական հաջողություններից մեկը: Մակայն կարելի էր արդյոք հաջողություն համարել մի համաձայնություն, որը փակուղի տարավ մերձավորարևելյան համապարփակ կարգավորումը, նոր բաժանումներ ստեղծեց տարածաշրջանում և էլ ավելի ամրապնդեց Իսրայելյան ծայրահեղական ուժերը: Իրականացվեց Բզեթիանություն մշակված ծրագրի միայն առաջին «կենտրոնական մասը»՝ եգիպտա-իսրայելյան համաձայնագրի կնքումը, որը ոչ միայն համապատասխան պայմաններ չստեղծեց հաշտության մասերի՝ պաղեստինյան և սիրիական ճակատներում համաձայնագրերի կնքմանը, այլ հակառակը, էլ ավելի ուժեղացրեց նրանց անապահովության և

սեփական անվտանգության խոցելիության զգացմունքները, մեկ անգամ ևս սուպրացեկով Վաշինգտոնի անկարողությունը կամ էլ ցանկության բացակայությունը՝ ձեռքագաղվելու մասնակի լուծումների քաղաքականությունից, որը խտրադրության փոխարեն ապակայունացում բերեց տարածաշրջանին:

Քարտերի նախագահության վերջին տարիների քննազրույց Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան դիրքերին շոշափելի հարված հասցրեցին Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը, ամերիկյան դեսպանությունում պատանդների հետ կապված ճգնաժամը և անշուշտ խորհրդային ներխուժումը Աֆղանստան:

Քենփ-Դեկոյի գործարքը վերջ դրեց 1973թ. հետո ԱՄՆ-ի հետ համագործակցելու Միլիտարի պատրաստակամությանը: Հիասրավությունը ամերիկյան քաղաքականությունից, շարունակվող ռազմական ներկայությունը Լիբանանում, ինչպես նաև արաբական աշխարհում մեկուսացման աճող զգացմունքը ստիպեցին Ասադին նորից շրջվել դեպի Մոսկվա:

Այսպիսով, տարածաշրջանում խաղաղություն հաստատելու Վաշինգտոնի փորձերը ավարտվեցին բացարձակ անհաջողությամբ: Անվերապահորեն աչակցելով իսրայելյան քաղաքականության իրականացմանը, ԱՄՆ-ն ոչ միայն վատբարացրեց իր հարաբերությունները Միլիտարի և «սուսպոզիտ» արաբական երկրների հետ, այլև փորձելով շահարկել Լիբանանում ստեղծված իրավիճակը, անողորակի կերպով պատճառ հանդիսացավ տարածաշրջանում լարվածության ստատիստիկան համար:

Քենփ-Դեկոյում ստորագրված համաձայնագիրը լուրջ քաղաքական փորձություն դարձավ Ասադի վարչակարգի համար: Ռուսերի նոր հավասարակշռություն ստեղծելով տարածաշրջանում, այն հատկացրեց Միլիտարին ալաբա-իսրայելյան հանկամարտության ամենագլխավոր դերերից մեկը: Եփրատի «արաբական խաղից դուրս գալուց» հետո Միլիտարի իր հսկողության տակ առավ արաբա-իսրայելյան հակամարտությունը, որը ռազմական տեսանկյունից վերածվեց սիրիա-իսրայելյան հակամարտության:

Երրորդ գլխում՝ «Միլիտարի-ամերիկյան հարաբերությունները 1979-1996թթ.», վերլուծության է ենթարկվում հարցերի լայն շրջանակ:

ա.Միլիտարի-ամերիկյան հարաբերությունները Քենփ-Դեկոյից հետո (1979-1983):

Քենփ-Դեկոյում եփրատ-իսրայելյան համաձայնագրի ստորագրումից հետո տարածաշրջանում Միլիտարի արտաքին քաղաքականության սուղև ծառայան հետևյալ երեք ելմանական խնդիրները՝ հակազդեցությունը Քենփ-Դեկոյից հետո էլ ավելի ինքնավստահ դարձած ու հզորացած Իսրայելին, պայքարը արաբական աշխարհում Քենփ-Դեկոյի գործընթացի օրինականացման դեմ և որպես գործնականում Իսրայելին հակազդող երկիր՝ բազմաբնույթ օժանդակության ապահովումը արաբական աշխարհի կողմից:

Ասադի քաղաքականության մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Իսրայելի դեմ պայքարում արաբական միասնականությանն ու ջանքերի համադրմանը վերաբերող հարցերը: Քենփ-Դեկոյից հետո տարածաշրջանում հաստատված ուժերի նոր հավասարակշռությանը Միլիտարի փորձեց հակադրել նոր դաշինքի ստեղծումն և Իրաքի հետ մերձեցմանն ուղղված ռազմավարությունը: Մակայն արաբական աշխարհում սիրող անհամաձայնության, բաժանվածության մրցույթն ու կիսարավությունը, ինչպես նաև ԱՄՆ-ից սպասումների բացակայությունն ու ներքին անկայունությունը ստիպեցին «փուլացած և

մեկուսացված» Միլիտարի դիմել խորհրդային օգնությանն ու պաշտպանությանը: Միացյալ Նահանգների և Եգիպտոսի միջև դաշինքին Միլիտարի փորձեց հակադրել ԽՍՀՄ-ի հետ բարեկամության համաձայնագիրը, որը միևնույն ժամանակ Իսրայելի հետ «ռազմավարական հավասարակշռություն» (ալ-բավադուն ալ-իսրաբիյի) հաստատելու հնարավորություն կրնձեռեր: «Ռազմավարական հավասարակշռության» հաստատումը գիևտնօրյաց բացի նախատեսում էր նաև տարածաշրջանում դաշնակիցների շրջանակի ընդլայնում՝ Իսրայելի վրա ճնշման նոր կետեր ստեղծելու և Եգիպտոսի կորուստը փոխարինելու նպատակով: Միլիտարի տարածաշրջանային վարկը բարձրացնելու համար ամենահարմար գործընկերներ կարող էին դիմել Իրանն ու Սաուդյան Արաբիան:

Քարտերի նախագահության վերջին շրջանում ի հայտ եկավ մի կարևոր համաձայնություն, որը հետագայում զգալի ազդեցություն ունեցավ սիրիա-ամերիկյան երկկողմ հարաբերությունների վրա: Դեռևս 1976թ. ԱՄՆ Կոնգրեսը «Միջազգային Անվտանգությանն Աչակցելու և Ջեների Արտահանումը Վերահսկելու» վերաբերյալ որոշում ընդունեց, որի 303 մասի համաձայն, արգելվում էր արտաքին օգնության ցուցաբերումը այն երկրներին, որոնք աչակցում են կամ էլ կապ ունեն ահաբեկչության հետ: 1979թ. ամերիկյան Կոնգրեսը նոր որոշում ընդունեց, որի համաձայն ԱՄՆ-ի Առևտրի և Պետական քարտուղարությունները պարտավորվեցին տեղեկացնել Կոնգրեսին 7 մլն. ամ. դոլարից ավել ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման մասին այն երկրներ, որոնք աչակցում են միջազգային ահաբեկչությանը: Այդ որոշման համաձայն, Պետարտուղարության վրա էր դրվում վերոհիշյալ երկրների տարեկան ցուցակի նախապատրաստումը: 1979թ. առաջարկ Միլիտարի նշվում է այդ երկրների շարքում, որի վրա բնականաբար տարածվում են ԱՄՆ-ի կողմից օժանդակության և առևտրի հետ կապված սահմանափակումները:

բ.Ռեյզանի մերձավորարևելյան ռազմավարությունն ու Միլիտարի:

ԱՄՆ նախագահ Ռեյզանի Ռեյզանի նոր ռազմավարության շրջանակներում սիրիա-ամերիկյան հարաբերությունները նույնպես ապրեցին լուրջ նահանջ: 1981թ. սեպտեմբերին ամերիկա-իսրայելյան Ռազմավարական փոխընթացման հուշագրի (Memorandum of Strategic Understanding) ստորագրումից հետո Միլիտարի արտգործնախարարը հայտարարեց, որ ամերիկա-իսրայելյան դաշինքը ներկայացնում է տարածաշրջանում հաստատված ուժերի հսկողության լուրջ քանակական փոփոխություն:

Ամերիկյան նոր ռազմական դոկտրինայի համաձայն, «հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն ԱՄՆ-ն կարող է դիմակայել Մոսկվային», առաջին անգամ նախատեսվում էր ամերիկյան անմիջական ռազմական ներկայությունը տարածաշրջանում: Այսինքն, անհրաժեշտության դեպքում Վաշինգտոնը չէր բացառում անմիջական ռազմական միջամտության հնարավորությունը: Իսկ ինչ վերաբերում է տարածաշրջանի «Հովանավորյալ» արաբական երկրներին, ապա նրանք միայն պետք է արժանադրեին բազաներ և ցուցաբերեին տեխնիկական օժանդակություն: Վերոհիշյալ ռազմավարությունից բխած ամերիկա-իսրայելյան սերտացումը դիմաց պետարտուղարության կողմից որպես իմնական հակադիր «իսրայելյան կայսրության» ԽՍՀՄ-ի և նրա «հովանավորյալներ» Միլիտարի ու պաղեստինցիների դեմ:

ԱՄՆ-ի և Իսրայելի միջև ռազմավարական համագործակցության մասին հուշագրի ստորագրումից հետո սիրիա-ամերիկյան հարաբերությունները

ձայրաստիճան չարվեցին: 1981թ. դեկտեմբերի 14-ից հետո, երբ իսրայելյան խորհրդարանը (կնեսետար) որոշում ընդունեց 1967թ. պատերազմի արդյունքում զբաղված Գոլանների բարձունքներն իսրայելյան իրավասության ենթարկելու, երբ չարդարացան ՄԱԿ-ի Անվանագության Խորհրդում վերոնշյալ որոշման նկատմամբ ամերիկյան հակազդեցությունն ապահովելու Դամասկոսի հույսերը, վերջինս միանշանակ հակաամերիկյան կեցվածք որդեգրեց, իսկ սիրիական խորհրդարանի խոսնակ Մահմուդ ալ-Ջուբին կոչ արեց արաբական երկրներին «խզվել իրենց հարաբերությունները ԱՄՆ-ի հետ»:

Չնայած Միացյալ Նահանգների վրա բանավոր հարձակումներին, պաշտոնական Դամասկոսը այնուամենայնիվ ձգտում էր բաց պահել Վաշինգտոնի հետ իր հաղորդակցման միջոցներն ու շարունակել պաշտոնական շփումները: Դրա մասին են վկայում Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-հալիմ Խադդամի ու Ասադի երբայր Ռիֆատտ ալ-Ասադի այցելությունները Վաշինգտոն, ինչպես նաև Դամասկոս տարբեր առիթներով ամերիկյան բանագնացներ Ֆիլիբ Հաբիբի և Մորրիս Դաալեռի այցելությունները:

Հեղինակը նշում է, որ սիրիա-ամերիկյան հարաբերությունների վրա բացասական անդրադարձ ունեցան Սիրիայում 1982թ. տեղի ունեցած ներքաղաքական իրադարձությունները, մասնավորապես մահմեդական սուննի ընդդիմության խռովությունը Համա քաղաքում:

գ. 1982թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան և սիրիա-ամերիկյան հարաբերությունները:

Լիբանանյան ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականության մասին չափազանց շատ է գրվել ու մեկնաբանվել, սակայն գրեթե բոլոր ուսումնասիրություններում բացակայում է Սիրիայի հանդեպ ամերիկյան քաղաքականության մասին խորը և անկողմնակա վերլուծությունը: Այդ կապակցությամբ հեղինակը անհրաժեշտ է համարել ընդգծել հետևյալը՝

- Ռեյգանի վարչակազմը, որդեգրելով ընդգծված հակախորհրդային և հակահանրակազմական քաղաքականություն, այնուամենայնիվ չունի մշակված հետևողական քաղաքականություն Սիրիայի հանդեպ և շատ դեպքերում հետևում էր իրադարձությունների զարգացմանը, այլ ոչ թե նախօրոք կանխատեսված փորձեր կատարում ազդելու նրանց ընթացքի վրա:
- համարելով Սիրիան տարածաշրջանային անվտանգության համար ամենամեծ վտանգը, Վաշինգտոնը թերազնահատեց Մերձավոր Արևելքում «սիրիական գործոնի» կարևորությունը, ինչպես նաև չկարողացավ ճշգրիտ հաշվարկել Լիբանանի դերն ու նշանակությունը Սիրիայի համար:

1982թ. լիբանանյան պատերազմի ընթացքում սիրիացիների ընդհանուր կորուստը կազմեց 400 զոհված և 1400 վիրավոր: Հունիսի 19-ին ժողովրդին ուղղված հայտարարության մեջ Ասադն առաջին անգամ շեշտելով արաբա-իսրայելյան հակամարտության սկզբունքային բնույթը՝ որպես «բախում երկու քաղաքակրթությունների միջև», անդրադարձավ նաև լիբանանյան ճգնաժամի քաղաքական սուպերտեքին՝

- Միացյալ Նահանգները լիակատար աջակցություն ցուցաբերեցին Իսրայելին:
- Պատերազմի նպատակն էր ավարտել արաբա-իսրայելյան հակամարտությունը ԱՄՆ-ին և Իսրայելին հարմար պայմաններով:

- Պատերազմը ուղղված էր Պաղեստինյան Դիմալթություն և Լիբանանյան ազգային շարժումների դեմ:

1982թ. պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի ուշադրությունը կենտրոնացավ Իսրայելի և Լիբանանի միջև համաձայնագրի ստորագրման վրա, որին պետք է հետևեր երկրից օտար ուժերի դուրսբերումը: Ամերիկյան վարչակազմը այստեղ էլ երկրորդական դեր հատկացրեց Սիրիային, որն ըստ Վաշինգտոնի, միայն Իսրայելի և Լիբանանի միջև համաձայնագրի ստորագրումից հետո պետք է միանար գործընթացին:

Լիբանանը դարձավ այն կոմպլեքսը, որի համար բավելիցին Սիրիայի և Միացյալ Նահանգների շահերը, առաջին անգամ հնարավոր դարձնելով երկու երկրների միջև ուղղակի առճակատումը: Վաշինգտոնն ընդարձակեց Լիբանանի նոր նախագահ Ամին ժմայելին իր քաղաքական և ռազմական աջակցությունը: Դամասկոսը գիտակցում էր, որ ԱՄՆ-ն ձգտում է հաստատել մարտնչների իշխանությունը Լիբանանում, որը բաց և յապաղ հարևան կարող է դառնալ Իսրայելի համար: Այս բոլորն անկասկած շատ ավելի լուրջ քաղաքական և ռազմական վտանգ էր պարունակում Սիրիայի համար, քան Քեմպ Դեյվի գործարքը:

Ամերիկյան քաղաքականությանը հակազդելու նպատակով Սիրիան փորձեց ստնն կերպ խափանել Լիբանանի և Իսրայելի միջև համաձայնագրի կնքումը: Դամասկոսում մտածում էին հետևյալ կերպ. «Եթե մենք ի վիճակի չենք խաղաղություն հաստատել մեզ հարձուր պայմաններով, ապա զոնե բույլ չտանք այնպիսի խաղաղություն, որը մեզ անուշադրության է մատնում»: Այդ նպատակով Սիրիան սկսեց բանակի վերազինումը ԽՍՀՄ-ի օգնությամբ, ինչպես նաև Լիբանանում Իսրայելի, ԱՄՆ-ի և մարտնչի Ֆալանգիստների դաշինքին հակադրեց շիիտների Ամալական ուժերի, Իրանի հովանավորությունը վայելող Հեզբոլլայի և Վալիդ Ջումրիատի գլխավորությամբ դրուզների միլիցիայի հետ ռազմա-քաղաքական համագործակցությունը:

Մի խոսքով, Իսրայելի ժամանակավոր հաղթանակը Լիբանանում ստիպեց Դամասկոսին նոր ռազմավարություն որդեգրել, որի համաձայն Մոսկվայի օգնությամբ Սիրիան ընդլայնեց իր ռազմական կարողությունները և սերտացրեց հարաբերությունները Թեհրանի հետ՝ համատեղ գործակցելով Լիբանանում ինչպես իսրայելյան, այնպես էլ ամերիկյան ու ֆրանսիական ջոկատների և օբյեկտների դեմ: Սիրիական բարձրաստիճան ղեկավարներին մեկի համաձայն. «Ստեղծված կացությունում Ասադն արեց ամեն ինչ, որպեսզի համոզի ամերիկացիներին այն բանում, որ Լիբանանում խաղաղության ճանապարհը անցնում է Դամասկոսով և որ ինքն ի վիճակի է անգամ հարվածել ԱՄՆ-ին»:

1982թ. սկսած սիրիա-ամերիկյան հարաբերություններում զգալի տեղ գրադեցրեցին անարեկչության ու պատանդների հետ կապված խնդիրները: Այդ ստեղծությունը հարկ ենք համարում նշել, որ Սիրիան, բույլատրելով իրանական խմբավորումների մուտքը Լիբանան, վարպետորեն օգտագործեց նրանց որպես խաղաքարտ Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում, մասնավորապես պատանդների հետ կապված հարցերում:

Վնասելիական գործողությունները ոչ վերջին դերը խաղացին նաև 1984թ. հունվարի 18-ին Լիբանանից ամերիկյան ուժերի դուրսբերման հարցում:

Լիբանանում ամերիկյան քաղաքականության անհաջողության մասին բազմիցս են անդրադարձել պատմաբաններն ու քաղաքագետները: Սակայն շատ

քչերն են նշել այն հանգամանքը, որ Վաշինգտոնի քաղաքականության անարդյունավետության հիմնական պատճառը կայացավ ոչ միայն լիբանանյան ճգնաժամի իրական դրապատման տեսանկյունից, ու ներքին շարժառիթների խոր և համակողմանի իմացության բացակայությունը, կամ Ռեյցանի ազմինիստրաֆիայի մեջ տարածայնությունների գոյությունն, այլև ճգնաժամի ընթացքում Սիրիայի դերի անտեսման և քերականությանը:

Լիբանանյան պատերազմի ընթացքում Վաշինգտոնի կողմից սկսող ռազմավարական հարաբերությունների հաստատումը Իսրայելի հետ և ծայրահեղ հակասիրիական քաղաքականության որդեգրումը միանգամայն հակառակ արդյունք ունեցան: Ամերիկյան այն տեսակետը, որի համաձայն Լիբանանում հՄՀՄ-ի, Սիրիայի, ՊՍԿ-ի, դրուզների և շիաների ձեռնարկված ճակատին անհրաժեշտ է հակադրել ԱՄՆ-ի Իսրայելի և մարոնիների համագործակցությունը, չափազանց հասարակ էր և հաշվի չէր առնում խմբավորումների մեջ գոյություն ունեցող շահերի անհամառոտությունը: Պարտադրելով մայիսի 17-ի համաձայնագրի ստորագրումը, Միացյալ Նահանգներն անուղակիորեն նպաստեցին Ժմայելի մեկուսացմանն ու բուլացմանը, միևնույն ժամանակ ուժեղացնելով նրա հակառակորդներին՝ Դրուզներին և Շիաներին: Չեղարկելով ռազմական գործողություններ նրանց դեմ, Վաշինգտոնը վերջիններին էլ ավելի մեծ կախվածության մեջ դրեց Դամասկոսից: Ավելին, համարելով Լիբանանում ընթացող քաղաքացիական պատերազմը որպես Արևմուտք-Արևելք հակամարտության տեղական արտահայտություն, Ռեյցանի վարչակազմն ու նրա դաշնակիցները նորից մղեցին Ասադին դեպի Մոսկվայի գիրկը, անրապեղելով վերջինիս դիրքերը տարածաշրջանում:

ՊՍիրիա-ամերիկյան հարաբերությունները 1984-89թթ.

1984-1989թթ. սիրիա-ամերիկյան հարաբերությունները կենտրոնացած էին կիմնականում արաբա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման, Լիբանանի հիմնահարցի լուծման, ահաբեկչության, բնրադեղերի առևտրի, մարդու իրավունքների հետ կապված հարցերի շուրջ:

Դամասկոսն ամեն կերպ փորձում էր չբռնաբերել նոր հորդանանա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումը և հանդես էր գալիս միջազգային վեհոժողովի գումարման օգտին, որը պետք է բացառեր արաբական երկրները Իսրայելի հետ առանձին-առանձին բանակցելու հնարավորությունը: Սիրիան կողմ էր խաղաղության հաստատմանը, սակայն իրեն ձեռնտու պայմաններով: Դամասկոսը փորձում էր խուսափել Իսրայելի հետ անմիջական բախումից և, շարունակելով հՄՀՄ-ի օգնությամբ գարգացնել իր տնտեսական և ռազմական ներուժը, սպասում էր հարձար առիթի՝ սկսել բանակցություններ ուժեղի դիրքերից: 1970-ականների կեսերից սկսած Սիրիան նախապատվություն էր տալիս Իսրայելի հետ կարգավորման քաղաքական և դիվանագիտական միջոցներին: 1988թ. ի վեր այդ միտումն էլ ավելի նկատելի դարձավ Սիրիայի արտաքին քաղաքականության համար: Հաշվի առնելով Իսրայելի հետ ռազմավարական հավասարակշռություն հաստատելու համար գոյություն ունեցող դժվարությունները՝ իրանա-իսրայելյան պատերազմից հետո Սիրիայի որոշակի մեկուսացումը տարածաշրջանում, տնտեսական ճգնաժամը երկրի ներսում, ինչպես նաև տեղի ունեցող հՄՀՄ-ի փլուզման հետ կապված գլոբալ փոփոխությունները, միանգամայն հասկանալի է, որ Դամասկոսը սկսեց ուղիներ փնտրել Միացյալ Նահանգների հետ իր հարաբերությունները բարելավելու համար՝ տարածաշրջանային և տնտեսական

դիրքերն ամրապնդելու, ինչպես նաև ամրիկյան և արաբական օժանդակությամբ Իսրայելի հետ հակամարտությունը կարգավորելու նպատակով:

Գործառնական «վերակառուցման» արդյունքում 50%-ով նվազեցին զենքի առաքումները Սիրիային: Չնայած որ 1988-89թթ. ընթացքում հՄՀՄ-ը դեռևս շարունակում էր տնտեսական և ռազմական ծրագրերի իրականացումը Սիրիայում /Տարտուս քաղաքի նավահանգստի կառուցումը և այլն, ինչպես նաև մոտ 2.500 ռազմական խորհրդատուների ներկայությունը/, սակայն պնդում էր արաբա-իսրայելյան հակամարտության քաղաքական կարգավորման վրա, բացառելով «ռազմական տարրերակը»:

Համայնավարության փլուզումը Արևելյան Եվրոպայում մեծ ազդեցություն ունեցավ Սիրիայի վրա: Կենտրոնական Եվրոպայի երկրները ոչ միայն մերժեցին շարունակել նախկին օժանդակությունն Ասադին, այլև, Իսրայելի արտաքին գործերի նախարար Մաշե Արենսի խոսքերով, «եկր էին կանգնել» Իսրայելի հետ իրենց հարաբերությունները վերականգնելու համար:

Գիտակցելով իրավիճակի փոփոխման փոսանքը Դամասկոսը փոխգիշտմային քայլեր ձեռնարկեց իր նկատմամբ Արևմուտքի դիրքորոշումը մեղմացնելու նպատակով: Այսպես, 1989թ. կառավարական պաշտոնյաները համաձայնեցին սուսպենսիան անգամ հանդիպել «Amnesty International»-ի ներկայացուցիչների հետ, արտաքսված սիրիացիներին բույրատրվեց վերադառնալ երկիր, 1990թ. մայիսի 22-ին կայացած Խորհրդարանային ընտրությունների արդյունքում անկախ ներկայացուցիչների բիվոն ավելացավ 18%-ից մինչև ընդհանուր բանակի մեկ-երրորդը, ազատ արձակվեցին բանտարկության մեջ գտնվող մի բանի սիրիացի հրեա կանայք, վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ, արգելվեց ահաբեկչական գործողությունները Արևմուտքի ներկայացուցչությունների նկատմամբ և այլն: Կայր ձեռք, Խորհրդային Միությունը, ռազմավարական դաշնակից համարելով հանդերձ, Դամասկոսն ավելի ու ավելի էր շրջվում դեպի Վաշինգտոն, հատկապես 1989թ. սկզբից, երբ ԱՄՆ նախագահ ընտրվեց Ջորջ Բուշը:

Հետաքրքրական է, որ Լիբանանում Վաշինգտոնի «պարտության» պատճառների շարքում ամերիկյան քաղաքագետները հաճախակի են անդրադառնում Ասադի «բռնաժիրական վարչակարգ»-ին, որը հիմնական խոչընդոտը հանդիսացավ Լիբանանում ամերիկյան քաղաքականության իրականացման համար: Սպիտակ Տունն ստալինյանաբար սկսեց գիտակցել Լիբանանում սիրիական գործունի կարևորությունը: Եվ ինչպես հայտարարեց Սիրիայի արտգործնախարար Շարաան, «ԱՄՆ-ի վարչակազմն ընդունել է Լիբանանում իր վարած քաղաքականության սխալը և ճանաչել է Սիրիայի կենտրոնական դերն այս տարածաշրջանում»:

Լիբանանյան ճգնաժամը կարգավորելու նպատակով ամերիկացիները բանակցություններ ձեռնարկեցին սիրիացիների հետ: Եվ ուժեղացրին արդյունքում նրանք համաձայնեցին մի շարք սկզբունքների հետ՝ Լիբանանում բոլոր կողմերի շահերը հաշվի առնող համաձայնագրի ստորագրման անհրաժեշտություն, Լիբանանի բաժանման անբույրատրելիություն, Լիբանանում նախագահական ընտրություններ անցկացնելու առաջնայնություն:

Հեղինակը սիրիա-ամերիկյան համագործակցությունը համարում է չափազանց կարևոր՝ Լիբանանում խաղաղության հաստման գործում: Այդ համագործակցության, ինչպես նաև ստալյան «օրհնության» շնորհիվ հնարավոր

նկատվում էր երկկողմ հարաբերությունների զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանային որոշ խնդիրների վերաբերյալ համաձայնության ձևաբերմանը, սակայն Հանրապետականների մեծամասնությունից կազմված ամերիկյան կոնգրեսի «կարծի» դիրքորոշումը Սիրիայի նկատմամբ շարունակ սահմանափակում է ամերիկյան քաղաքականությունը այդ երկրի հանդեպ:

Այսպիսով, չնայած երկկողմ հարաբերությունների համեմատաբար բարելավմանը 90-ական թվականների ընթացքում, այնուամենայնիվ սիրիա-ամերիկյան հարաբերությունները չկայողացան ձերբազատվել դեռևս սառը պատերազմից մնացած «մրցակից հովանավոր և մրցակից հովանավորյալ» մակարդակին բնորոշ հատկանիշներից: Վաշինգտոնն անկարող գտնվեց այնպիսի դիվանագիտություն որդեգրել, որը կնպաստեր Սիրիայի էլ ավելի ակտիվ ներգրավմանը տարածաշրջանային գործընթացների մեջ, ստրագեգիկ Սիրիայի հակակշռող դերը Իրաքի և Իրանի նկատմամբ ու աստճանաբար դուրս բերելով նրան տարածաշրջանային մեկուսացումից:

Միացյալ Նահանգները չկարողացան հստակ անվտանգության երաշխիքներ առաջարկել կողմերին, մասնավորապես խուսափելով Գոլաններում անմիջական ամերիկյան ներկայության հնարավորությունից:

Համաձայնագրի ստորագրումը արագացնելու նպատակով ԱՄՆ-ն անկարող գտնվեց օգտագործել նաև տնտեսական լծակները Սիրիայի հետ իր հարաբերություններում:

Ինչ վերաբերում է խաղաղության գործընթացում Սիրիայի ցուցաբերած «դանդաղ կոտորյանը», սպա հեղինակն այն բացատրում է նրանով, որ Իսրայելի հետ խաղաղության հաստատումը յուրյ բարդություններ է պարունակում և չափազանց վստահավոր հետևանքներ կարող է ունենալ պաշտոնական Դամասկոսի համար: Առաջին հերթին, այն կարող է օտարել Բաաս կուսակցության մեծ թվով անդամներին և կառավարական ծառայողներին, որոնց հիմնական մասը, սիրիյան վտանգի պատճառաբանումով, ներգրավված է հսկա ռազմական և ներքին անվտանգության համակարգերում: Երկրորդ հերթին, սիրիացի գործարարներն ու փրեբայները Իսրայելի հետ խաղաղության հաստատումը դիտում են որպես Արևմուտքի նկատմամբ երկիրը բացելու սկիզբ: Այդ ճանապարհով նրանք հույսեր են տածում քոբափել ամբողջատիրական վարչակարգն իր սահմանափակումներով և գլոբալ մեկուսացմամբ: Աստղը հավանաբար չի կարող մտահոգված չլինել այն հանգամանքից, որ «պերեստրոյկան» կարող է փոխել իր կառավարությունը, ինչպես դա կատարվեց Արևելյան Եվրոպայի երկրներում:

Վերջապահում շարադրված են սիրիա-ամերիկյան հարաբերությունների զարգացման հեռանկարները: Ներկայացնելով ԱՄՆ վարչակազմի և Կոնգրեսի մեջ Սիրիայի նկատմամբ ձևավորված երկու ծայրահեղ տեսակետները, հեղինակը եզրակացնում է, որ, ներկայումս դժվար է կանխագուշակել, քե որ տեսակետը մոտ սպագայում գերիշխող կդառնա Սիրիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության մեջ: Սակայն հաշվի առնելով տարածաշրջանում ԱՄՆ-ի համար ոչ բարենպաստ զարգացումները (Իրաքի դեմ անգլո-ամերիկյան վերջին ռազմական գործողությունների անարդյունավետություն ու Թեհերանի հետ հարաբերությունները կարգավորելու Վաշինգտոնի անհաջող փորձերը), ինչպես նաև վերջերս Ռուսաստանի ակտիվացումը տարածաշրջանում, կարելի է վստահաբար հաստատել, որ Դամասկոսում ներկայիս վարչակազմի պահպանման

պայմաններում մոտ ժամանակներս ԱՄՆ-ի ռազմավարության և հատկապես Սիրիայի նկատմամբ քաղաքականության յուրյ փոփոխությունն անխրական է: Մեր այս տեսակետի օգտին է խոսում նաև այն հանագամանքը, որ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը մշակող և ձևավորող հիմնական օղակները /Նախագահը, Կոնգրեսը, գործադիր իշխանությունները, ինչպես նաև տարբեր շահեր պաշտպանող խմբերն (interest groups) ու հասարակական կարծիքը/ գործնականում համոզված չեն Սիրիայի հետ հարաբերությունների սերտացման անհրաժեշտության մեջ, բացի պետքարտուղարության «արագեցնելու» մի խմբից, քաղաքական և գիտական որոշ շրջանակներից:

Հեղինակի կարծիքով, դժվար է որևէ յուրյ առաջխաղացում ակնկալել նաև ԱՄՆ-ի նկատմամբ Դամասկոսի դիրքորոշման մեջ: Զանի դեռ ԱՄՆ-ն հանդիսանում է խաղաղության գործընթացի հովանավորողը և պահպանվում է վերջինիս հետ տնտեսական հարաբերությունների բարելավման հնարավորությունը, մեր կարծիքով, Դամասկոսը չի որդեգրի այնպիսի քաղաքականություն, որը կարող է վտանգել Վաշինգտոնի հետ իր ներկայիս հարաբերությունները: Անգամ սերտացնելով ռազմական համագործակցությունը Ռուսաստանի հետ, Դամասկոսը այնուամենայնիվ թույլ չի տա որպեսզի այն հարվածի տակ դնի ԱՄՆ-ի հետ իր ունեցած հարաբերությունները: Դամասկոսում քաջ գիտակցում են, որ մի շարք պատճառներով՝ տնտեսական ճգնաժամ և այլն, Մոսկվայի հետ հարաբերությունները չեն կարող վերականգնել համագործակցության այն ռազմավարական մակարդակը, որը գոյություն ուներ Խորհրդային Միության ժամանակ: Սակայն դա չի նշանակում, որ Սիրիան բացառում է Մոսկվայի օգտագործումը Միացյալ Նահանգների վրա ճշում գործադրելու ուղղությամբ: Դամասկոսի քաղաքականությունը ԱՄՆ-ի նկատմամբ կարող է փոխվել, եթե, ասենք, տապալի խաղաղության գործընթացը, կամ էլ այն դեպքում, երբ Սիրիան հասկանա, որ Վաշինգտոնը հրաժարվում է իր պարտավորություններից, կամ էլ որևէ պատճառով թշնամական կեցվածք ընդունի նրա նկատմամբ (օրինակ, ահաբեկչությանն աջակցելու պատճառաբանությամբ):

Հեղինակը նաև նշում է, որ գոյություն ունեցող օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր պատճառների և քաղաքականությունների հետ մեկտեղ, սիրիա-ամերիկյան հարաբերությունների բարելավումն անմիջականորեն կախված է սիրիա-իսրայելյան հակամարտության կարգավորումից: Երկկողմ հարաբերությունների զարգացման համար գոյություն ունեցող հիմնական խոչընդոտները աստիճանաբար կհարթվեն Սիրիայի և Իսրայելի միջև խաղաղության հաստատման դեպքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1.Սիրիա-ամերիկյան հարաբերությունները և խաղաղության գործընթացը Արաբական Արևելքում, Երևան, 1999.

2.Сирийско-американские отношения в свете ближневосточного урегулирования. Сборник статей. 1996, “Айастан”, Ереван, стр. 35-42.

3.No Peace Yet for Syria. Collection of Studies. “War”, Centre for Strategic Studies, Ministry of Defence of the Republic of Slovenia. Ljubljana, 1998, p.21-29.

КАРАПЕТЯН РУБЕН КАРЛЕНОВИЧ

СИРИЙСКО-АМЕРИКАНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1967-1996гг.

РЕЗЮМЕ

Одним из главных препятствий на пути установления мира на Ближнем и Среднем Востоке является арабо-израильский конфликт, корни которого уходят в глубь веков. После окончания Второй мировой войны и создания государства Израиль в 1948 году Ближний и Средний Восток стал одним из важных узлов международной политики, горячей точкой нашей планеты. Долгие годы Египет, в силу своего военного потенциала, территории, активного руководства и благоприятного географического положения, по праву считался самой важной из противоборствующих с Израилем арабских стран. Однако с подписанием Кэмп-Дэвидских соглашений, Египет потерял эту свою роль, а его место занял другой, не менее сильный сосед Израиля, Сирия, которая взяла на себя руководство арабским лагерем, тем самым получив единоличную возможность ведения войны и установления мира с Израилем. С военной точки зрения арабо-израильский конфликт превратился в сирийско-израильский конфликт.

В период холодной войны продолжающаяся опасность конфронтации супердержав и поляризация региона между США и Израилем с одной стороны, и СССР вместе с Сирией и другими леворежимными арабскими странами, с другой, делали возможность ближневосточного урегулирования маловероятной. В этом смысле, исследование отношений между одной из супердержав, США, и противостоящей Израилю передовой арабской страной, Сирией, приобретает особое значение.

Целью данного исследования является всестороннее освещение сирийско-американских отношений с 1967 по 1996 годы, а также выявление механизмов их формирования и перспектив развития. В работе дается тщательный анализ позиций США и Сирии по отношению к происходящим в регионе важным событиям и процессам. Отношения между двумя странами во многом зависят от арабо-израильского конфликта, освещению которого отведено значительное место в работе.

О политике США на Ближнем Востоке имеется целый ряд научных трудов и публикаций, однако тема сирийско-американских отношений до сих пор глубоко не изучена. Эта работа является первой попыткой исследования отношений между двумя государствами, выявления решающей роли Сирии в деле установления мира на Ближнем Востоке и в урегулировании арабо-израильского конфликта.

Тема актуальна с точки зрения формирования внешней политики Армении по отношению к арабским странам, и в частности, к Сирии.

Среди многочисленных источников, на основе которых написана работа, следует отметить труды арабских, европейских и американских авторов, в частности, произведения В.Квандта, П.Сила, А.Кордсмана, Ж.Кимше, В.Полка, В.Лакера, Р.Хиннебуша, Р.Фридмана, М.Маоза, Б.Кауфмана, М.Хадсона. В работе использованы также материалы из трудов и мемуаров многих видных

государственных деятелей США: Р.Никсона, С.Венса, Дж.Картера, Г.Киссенджера, Х.Декмеджана и др.

Чрезвычайно важным источником для анализа основной проблемы, затронутой в работе, явились труды советских востоковедов, в особенности, исследования Е.Пирлина, Л.Медведко, Е.Примакова, Н.Оганесяна, О.Фомина, В.Вавилова, Э.Пир-Будаговой, В.Бодянского.

Из арабских авторов следует особенно выделить М.Хейкала, Ф.Аджамии, Г.Саламе, Р.Авада, Ш. ал-Айсама, Г.Хана, М. ар-Разаза, Г.Адила, труды которых также стали ценными источниками для написания работы.

Необходимым источником послужили выступления и интервью сирийских руководителей, материалы политической партии Баас, и, в особенности, сборники выступлений Х.Асада.

В работе широко использованы материалы и сведения, почерпнутые из личных встреч и бесед автора с высокопоставленными политиками и дипломатами обеих стран.

Работа состоит из введения, трех глав, заключения и трех приложений. Приложение первое представлено в виде карты, на которой иллюстрируются еврейские поселения на Голанских высотах. Приложение второе дано в виде таблицы, на которой в цифрах выражена военная помощь США Израилю с 1987 по 1994гг. Приложение третье представляет собой сравнительную диаграмму сухопутных и воздушных сил Сирии и Израиля по состоянию на 1993-94гг.

В введении обосновываются выбор темы, ее актуальность и научная новизна. Здесь автор знакомит также с задачами и целями, которые поставлены в работе.

В первой главе автор дает характеристику сирийско-американских отношений с 1967 по 1974гг.

В ней описывается история формирования дипломатических отношений между США и Сирией (1944г.) и шестидневная арабо-израильская война, приведшая к их разрыву. Здесь же подробным образом освещаются позиции сторон в период Иорданского кризиса, а также те последствия, которые имели приход к власти в Сирии Х.Асада (1970г.) и арабо-израильская война (1973г.) для двусторонних отношений.

Во второй главе анализируется период восстановления и нормализации отношений между двумя странами после окончания войны (1973г.) до подписания кэмп-дэвидских соглашений (1978г.). Значительное место уделено освещению политики США и Сирии по отношению к вспыхнувшей в Ливане гражданской войне.

В третьей главе, которая посвящена исследованию сирийско-американских отношений с 1979-1996гг., говорится о ближневосточной доктрине Рейгана. Большое место в этой главе уделено описанию противостояния Вашингтона и Дамаска в Ливане и далее процессу мирного урегулирования на Ближнем Востоке.

В заключении автором дается анализ двух точек зрения, существующих на сегодняшний день в американской политике по отношению к Сирии. Сторонники так называемой "жесткой" позиции считают, что существует много непреодолимых преград для полной нормализации отношений между США и Сирией. По их мнению, Сирия продолжает представлять опасность для стабильности в регионе, и, предостерегая от сближения с Асадом, они

приводят в пример ошибку содействия администрации Саддама Хусейна в недавнем прошлом.

Сторонники же "мягкой" позиции выступают за конструктивный диалог с Сирией, отводя ей важную роль в регионе.

Из всего представленного, автор делает вывод, что при сохранении нынешнего режима в Дамаске, в ближайшее время серьезные изменения в политике США по отношению к Сирии представляются нереальными. Сирия же, учитывая тот факт, что США на сегодняшний день являются основным гарантом мира в регионе, постарается не поставить под удар свои отношения с Вашингтоном.

Наряду с наличием объективных и субъективных причин, улучшение сирийско-американских отношений будет во многом зависеть от урегулирования сирийско-израильского конфликта. Большинство из существующих преград для развития двусторонних отношений будут преодолены в случае установления мира между Сирией и Израилем.

ДИССЕРТАЦИЯ НА СОИСКАНИЕ
УЧЕНОЙ СТЕПЕНИ КАНДИДАТА
ИСТОРИЧЕСКИХ НАУК

ROUBEN KARLEN KARAPETIAN

"SYRIAN-AMERICAN RELATIONS IN 1967-1996"

Տպագրված է ՀՀ ԲՈՎ-ի պատվերով

Հանձնված է տպագրության 11.08.99 թ: Պատվեր 137: Տպարանակ 60:

Տպագրված է «Դավիթ» կոոպերատիվի տպարանում:
Երևան, Տեքյան 72: